

ԱՌԻՆ-ՄԱՔՐՈՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Հանրապետության նախագահ ժոզեֆ Աուն Աքապայի նախաձեռնության ծիրին մեջ բանակի եւ ապահովական ուժերու աջակցության խորհրդածոլովի նախապատրաստական ժողովի բացման նախօրեակին Էլիզե պալատին մեջ հանդիպում ունեցաւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ: Այս մասին հաղորդեց նախագահական պալատի տեղեկատուական գրասենեակը:

«Նախագահներ Աուն ու Մաքրոնը քննարկեցին լիբանանեան-ամերիկեան-խորայելեան բանակցութիւններուն եւ «շրջագծային համաձայնութեան» լոյսին տակ խորայելեան յարձակումներուն վերջ տալու համար թափուող ջանքերը», հաղորդեց գրասենեակը՝ նշելով. «Նախագահ Աուն շնորհակալութիւն յայտնեց իր ֆրանսացի պաշտօնակիցին՝ Ֆրանսայի Լիբանանին տրամադրած աջակցութեան համար, եւ անոր կացութեան անձնական կերպով հետեւելուն ու պետութեան իշխանութեան, գերիշխանութեան, պետական, ապահովական ու զինուորական հաստատութիւններուն աջակցութեան նկատմամբ նախանձախնդրութեան համար»:

«Հանրապետության նախագահը բարձր գնահատեց Ֆրանսայի նախագահի Իտալիոյ վարչապետին հետ ձեռնարկած ՖԻՆԻԼ-ի առաքելութեան աւարտին յաջորդող փուլին համար նախաձեռնութիւնը», նշեց գրասենեակը:

«Համաձայնութիւն գոյացաւ շարունակելու հաղորդակցութիւնը եւ ընդլայնելու տարբեր ոլորտներու, մասնաւորաբար տնտեսական եւ ուժանիւթային ոլորտներուն մէջ համագործակցութիւնը, ինչպէս նաեւ վերսկսելու Լիբանանի պլոքներուն մէջ քարիւղի եւ կազի հետախուզումը», եզրափակեց նախագահական պալատի տեղեկատուական գրասենեակը:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Օրինութեամբ՝
ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կիրակի, 20 սեպտեմբեր 2026-ին, Անթիլիասի մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթացս սուրբ եւ անմահ պատարագին, պիտի կատարուի Հանրապետական մաղթանք եւ Հայաստանի Հանրապետութեան դրօշի օրհնութիւն՝ հայրենիքին վերանկախութեան 35-րդ տարեդարձին առիթով: Սուրբ պատարագը սկիզբ պիտի առնէ ժամը 10:00-ին:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցելու սուրբ պատարագին, որպէսզի միասնական աղօթքներով խնդրենք Ամենակալէն, որ ամուր ու անսասան պահէ մեր հայրենիքը եւ զայն փրկէ ամեն տեսակ փորձութիւններէ:

ԴԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ԱՌԻՆ-ՄԱՔՐՈՆ-ԱՊՏԱԼԼԱ Բ. ԵՌԱԿՈՂՄ ԺՈՂՈՎ



Փարիզի «Անվալիտ» պալատին մէջ գումարուեցաւ հանրապետութեան նախագահ ժոզեֆ Աունի, Յորդանանի Ապտալա Բ. թագաւորի եւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի միջեւ եռակողմ ժողով մը:

Եռակողմ հանդիպումը կեդրոնացած էր փոխադարձ հետաքրքրութիւններկայացնող ոլորտներու մէջ համագործակցութեան եւ համակարգման բարելաման **մեքանիզմներուն** վրայ:

Քննարկումները նաեւ անդրադարձան Ֆրանսայի մէջ Աքապայի հողովոյթի յաջորդ փուլի հանդիպումները հիւրընկալելու կարելորդութեան: Այդ հանդիպումները պիտի ուսումնասիրեն Լիբանանի բանակին աջակցելու ուղիները՝ Լիբանանի ժողովուրդի անվտանգութեան եւ պաշտպանութեան պահպանման իր դերը կատարելու

գործին մէջ՝ համագործակցելով ներքին ապահովութեան ուժերուն հետ:

Հանդիպման ընթացքին անդրադարձ եղաւ շրջանային վտանգաւոր սրումին: Երեք ղեկավարները ընդգծեցին միջազգային ջանքերու աշխուժացման անհրաժեշտութիւնը՝ հասնելու համապարփակ եւ կայուն զինադադարի, որ պիտի վերականգնէ շրջանին մէջ կայունութիւնը: Քննարկուեցան Կազայի, Այսրորդանանի եւ Երուսաղէմի ընդհանուր զարգացումները:

Նախագահ Աուն հանդիպումի ընթացքին շեշտեց շրջանին անվտանգութեան իրար կապուածութեան կարեւորութիւնը եւ կոչ ուղղեց ուժանիւթի միացեալ ծրագիրներու որդեգրման, տնտեսական, ապահովական ու քաղաքական գործակցութեան ճամբով հասարակաց միջազգային անվտանգութեան ռազմավարութիւն մշակելու:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

- ԻՐԱՅՅԵԼԵԱՆ զինուորական աղբիւր մը «Հատա» արբանեակային պատկերասփիւռի կայանին. «Յըզպալլայի կողմէ իր կարողութիւնները վերականգնելու որեւէ փորձ անմիջական հակադարձութեան պիտի արժանանայ»:
- ԼԱԻՍԵՂԵԱԿ աղբիւրներ «Ժումհուրիա» օրաթերթին. «ՖԻՆԻԼ-ի թղթածրարը եւ ղեկտեմբերի վերջին հարաւային Լիբանանի մէջ անոր առաքելութեան աւարտը Փարիզի խորհրդածոլովին օրակարգին վրայ պիտի ըլլայ»:
- ՊԱՇՏՈՆԱԿԱՆ աղբիւր մը «Ժումհուրիա» օրաթերթին. «Բանակին աջակցութեան ապահովումը կ'ամրապնդէ զինուորական հաստատութիւնը եւ կը նպաստէ անոր առջեւ դրուած խնդիրներու ամբողջ Լիբանանի մէջ գործադրութեան: Բայց եւ այնպէս, մասնաւորաբար հարաւային Լիբանանի մէջ անոր

առաքելութեան յաջողութիւնը կապուած է թիւ 1701 որոշումի պահպանման եւ լուրջ գործադրութեան»:

● ՊԱՊՏԱՅԻՆ պալատին մօտիկ աղբիւրներ «Տիար» օրաթերթին. «Նախագահ Աունի Լիբանանի կողմէ Իսրայէլի հետ ապահովական համաձայնագիրի ձգտման մասին խօսքերը, անոր զուգահեռ պետութեան զենքի մեկնաշնորհին վրայ անոր շեշտադրելն ու հարաւային Լիբանանի մէջ անվտանգութեան որեւէ բաց մերժելը չեն կրնար անջատուիլ հարաւային Լիբանանի մէջ անվտանգութեան պատկերը վերածելու շարունակական միջազգային ջանքերէն»:

● ՏԱՏԵՆՈՒԹԵԱՆ եւ առեւտուրի նախարարութեան որոշումով միջակ չափի հացի կապը այսուհետ պիտի փութի մօտ 80000 լ.ն. է, նպարավաճառին մօտ՝ 95000 լ.ն., իսկ պզտիկ կապի գինը փութի մօտ՝ 55000 լ.ն. իսկ նպարավաճառին մօտ՝ 60000 լ.ն.:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻԶԵՍԵԱՆԻ մահուան քառասունեան առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 20 սեպտեմբեր 2026-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Արաքսի Տապաղեան եւ դուստրը՝ Մելիք Տէր եւ տիկին Արթիւր եւ Սօսի Տապաղեան Տէր եւ տիկին Աւագ եւ Նորմա Տաքսետեան եւ զաւակունք

Տիկին Սոնիա Բէսթեան եւ զաւակունք
Հանգուցեալ Զելե Սեմերճեանի ընտանիք
Հանգուցեալ Անժէլ Պերդոյեանի ընտանիք
Հանգուցեալ Արփինե Ոսկեանի ընտանիք
Տաքսետեան եւ Դագետեան ընտանիքներ
Բեռնիքեան եւ Սաչեան ընտանիքներ
Ոսկեան եւ Բիւրքեան ընտանիքներ
Պերդոյեան եւ Սեմերճեան ընտանիքներ
Ուստաքարայեան եւ Դարիպեան ընտանիքներ
Վահեճեան եւ Էմմանեան ընտանիքներ
Գալայճի եւ Տուրաք ընտանիքներ
Մեզա եւ Թապուլա ընտանիքներ
Եւ համայն ազգականներ կը գլծեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝


ԳՈՐԳ ՏԱՊԱՂԵԱՆԻ (KING GEORGE) (Ծնեալ 1934-ին)

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 16 սեպտեմբեր 2026-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի շաբաթ, 19 սեպտեմբերին, կէսօրուան ժամը 12:00-ին, Ճիւնիի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆըրն Շըպպեքի Ազգային գերեզմանատունը:

● **Ներկայս ընդունիլ իբրեւ մահադգ:**
● **Ցաւակցութիւնները կ'ընդունուին նախքան եւ յետ թաղման արարողութեան, եկեղեցւոյ սրահին մէջ, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, ինչպէս նաեւ կիրակի, 20 սեպտեմբերին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Նոյն վայրին մէջ: Կարելի է նաեւ հեռաձայնել 03-918444 թիւին:**

● **ԾԱՆՕԹ.-** Փոխան ծաղկեպսակի՝ Նուիրատուութիւն կատարել եկեղեցւոյ:



Մուսա Լեւրան Հերոսամարտի 111-ամեակի - Եւ Այնճարի Հիմնադրութեան 87-ամեակի ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՕՆԱՆՄԱՐՈՒԹԻՒՆ

Պատգամախօս՝
Ընկ. Ալլայէր Պալապանեան
Հ.Յ.Դ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ
Գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ՝
երգիչ Դազար Քեօշկերեանի,
Համազգայինի «Պարոյր Սեւակ» Մասնաճիւղի «Կաքաւիկ» երգչախումբին
եւ գիւղիս վարժարաններու աշակերտութեանց

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 19 Սեպտեմբեր 2026-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Մուսա Լեւրան հերոսամարտի յուշահամալիրի շրջափակէն ներս:

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ, ՄԱՏԱՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՇԽՈՒՄ
Կիրակի, 20 Սեպտեմբեր 2026-ին, առաւօտեան ժամը 10:00- ին:

Հրաւիր

ՄՈՎՍԷՍ ԱԻԱԳ ՔՀՆՅ. ՇՐԻԳԵԱՆԻ «ՅՈՒՇԵՐ»-ՈՒ ԳԻՆԵՉՕՐ

Չորեքշաբթի, 16 սեպտեմբեր 2026-ի երեկոյան ժամը 7:30-ին, Այնճարի «Սարգիս Չեթեան» կեդրոնին մեջ, Մուսա Լերան Ազգագրական թանգարանի յանձնախումբին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Մովսէս Աւագ քահանայ Շրիգեանի՝ վերջերս հրատարակուած «Յուշեր» հատորի գինեծօնը, խմբագրութեամբ՝ Վարուժան արք. Յերկելեանի:

Բացման խօսքին մեջ երեկոյի հանդիսավար Յիւտա Տումանեան նախ յօտնկայս հրաւիրեց ներկաները յարգելու յիշատակը վերջերս մահացած Մետրոպ Զետիորճեանին, որ երկար տարիներ նուիրումով եւ անձնագոհութեամբ վարած էր Մուսա Լերան Ազգագրական թանգարանի յանձնախումբի ատենապետի պաշտօնը՝ իր արժեքաւոր ծառայութիւնը մատուցելով մեր պատմական ու մշակութային ժառանգութեան պահպանման եւ փոխանցման տուրք գործին:

Ապա Տումանեան ամփոփ կերպով անդրադարձաւ նոր հրատարակուած «Յուշեր»-ուն եւ շնորհակալութիւն յայտնեց «Գառնի» մատենաշարի հիմնադիր եւ խմբագիր Վարուժան արք. Յերկելեանին:

Ապա ընթացք առաւ ձեռնարկը Մովսէս Ա. քահանայ Շրիգեանի յիշատակի աղօթքով մը: Անկէ ետք մեներգով ելոյթ ունեցաւ Վիքթոր Գեորգեան, իսկ նոր հրատարակուած հատորէն հատուած մը ընթերցեց Դուլին Յերկելեան:

Գիրքը ներկայացուց Եսայի Յաւաթեան, որ ամփոփ գիծերու մէջ ծանօթացուց հատորի հրատարակութեան նախապատրաստութիւնն ու իրագործման փուլերը՝ թէ՛ հետաքրքրական եւ թէ՛ արժեքաւոր նկատելով տէր Մովսէսին յուշերը, որոնք կը պարունակէ բացառիկ տեղեկութիւններ մուսալեռացիներու ապրած շուրջ 100 տարիներու կեանքին ու պատմական անցուղարձերուն մասին: Ան շնորհակալութիւն յայտնեց Վարուժան արքային այս իրագործումին համար, ինչպէս նաեւ մեկնասանդ Գեորգ եւ Սարգիս Շրիգեաններուն:

Հաւաթեան շեշտեց, որ այս գիրքի ծննդոցին մէջ առանցքային դերակատարութիւն ունեցաւ Նարեկ Ա. քնիւ: Շրիգեանի, որ այս յուշերը յանձնեց իրենց:

Նուագով յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին Վիքի Հաւաթեան՝ շուիով եւ Սարք Զետիորճեան՝ թմբուկով:



Գինեծօնի արարողութեան մասնակցեցան գիրքի մեկնասաները, հոգեւոր հայրերը, Այնճարի քաղաքապետը, «Կարմիր Լեռ» կոմիտէի ներկայացուցիչը եւ թանգարանի յանձնախումբի ատենապետը:

Իբրեւ երախտագիտութիւն՝ թանգարանի յանձնախումբի անունով յուշանուէրներ յանձնուեցան մեկնասաներուն եւ Եսայի Յաւաթեանին, նաեւ՝ Վարուժան արքային:

Ձեռնարկի աւարտին գիրքի խմբագիր Վարուժան արք. Յերկելեան իր սրտի խօսքը փոխանցեց այս առիթով եւ ըսաւ. «Քաջալերելի է մեծաթիւ հայրենակիցներուն ներկայութիւնը այս ձեռնարկին, մասնաւորապէս որ ընթերցասիրութիւնը շատ նուագած է, ինչպէս նաեւ՝ գիրքի հանդէպ հետաքրքրութիւնը»:

Ան շնորհակալութիւն յայտնեց այս ծրագրի հրատարակութեան մէջ իրենց ներդրումը ունեցողներուն:

Երեկոյն աւարտեցաւ «Մուսա Լերան գիւղերն» խմբերգով, գիրքի մակագրութեամբ ու բաշխումով:

ՏԵՍԱԿԷՏ

ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ



Լիբանանի ներկայ իրավիճակը այլեւ կարելի չէ դիտարկել իբրեւ հերթական քաղաքական կամ տնտեսական ճգնաժամ: Երկիրը կը գտնուի միաժամանակ ապահովական, տնտեսական, ընկերային եւ պետական կառավարման ծանր ճնշումներու տակ: Նոր բախումներու պատճառով տնտեսական վերականգնումը խաթարուած է, իսկ Համաշխարհային դրամատունը 2026-ի համար կը նախատեսէ Լիբանանի տնտեսութեան 6,4 տոկոս կրճատում: Միաժամանակ հարաւային շըրջաններուն մէջ շարունակուող բախումները եւ անորոշութիւնը կը խորացնեն տեղահանութիւնն ու ընկերային ճնշումները:

Այս պայմաններուն մէջ լիբանանահայութեան համար հարցը ոչ միայն ինչպէ՞ս գոյատեւելն է, այլ նաեւ՝ ինչպէ՞ս պահպանել իր ազգային, քաղաքական, տնտեսական եւ ընկերային կշիռը:

Պատասխանը պէտք է փնտռել ոչ թէ անցեալի կառոյցները միայն պահպանելու, այլ գտնելու նոր պայմաններուն համապատասխան վերակազմակերպելու մէջ:

Առաջին. պէտք է ամրապնդել համայնքային միասնականութիւնը

Լիբանանահայութիւնը ունի եկեղեցական, քաղաքական, կրթական, մշակութային, բարեսիրական եւ մարզական հարուստ կառոյցներ: Այս բազմազանութիւնը ուժ է, բայց ան կրնայ նաեւ վերածուիլ մասնատուածութեան, եթէ իւրաքանչիւր կառոյց գործէ առանձին եւ առանց ընդհանուր տեսլականի:

Հետեւեալք անհրաժեշտ է ստեղծել լիբանանահայութեան համահամայնքային խորհրդակցական մարմին մը, որուն մէջ ներկայացուած ըլլան՝ եկեղեցիները, քաղաքական կուսակցութիւնները, կրթական եւ մշակութային կազմակերպութիւնները, երիտասարդութիւնը, մասնագիտական միութիւնները եւ գործարար շրջանակները: Այս մարմինը պէտք է փոփոխուի յաճախ: Ան պէտք է ըլլայ համակարգող հարթակ մը՝ համայնքի կենսական հարցերուն շուրջ միասնական առաջնահերթութիւններ սահմանելու համար:

Երկրորդ. հայութիւնը պէտք է շարունակէ քաղաքականօրէն ներկայ ըլլալ, բայց՝ ոչ մեկուսացած

Լիբանանահայութիւնը պէտք է շարունակէ մնալ Լիբանանի պետական եւ քաղաքական կեանքին մէջ գործող ուժ: Սակայն ներկայի պայմաններուն մէջ միայն խորհրդարանական պոռոտներու պահպանումը բաւարար չէ:

Պէտք է մշակուի հայկական քաղաքական օրակարգ, որ կը ներառէ՝ պետականութեան ամրապնդում, բանակի եւ պետական հաստատութիւններու դերակատարութեան զօրացում, Լիբանանի ինքնիշխանութեան պաշտպանութիւն, տնտեսական վերականգնում եւ բոլոր համայնքներու իրաւահաւասար քաղաքացիութիւն:

Հայ համայնքը պէտք է ըսէ յստակօրէն՝ մենք Լիբանանի ճգնաժամին հանդիսատեսը չենք. մենք այս երկրին քաղաքացիներն ենք եւ լուծման գործընթացին մասնակիցները:

Երրորդ. համայնքի տնտեսական ինքնապաշտպանութիւնը

Տնտեսական անորոշութիւնը կրնայ աւելի արագ քայքայել համայնքը, քան՝ քաղաքական որեւէ պարտութիւն: Ուստի անհրաժեշտ է ստեղծել լիբանանահայ տնտեսական համախմբման ծրագիր:

Այդ ծրագիրը կրնայ ներառել՝
- Հայ գործարարներու եւ մասնագետներու միասնական ցանց,
- Երիտասարդներու մասնագիտական վերապատրաստութիւն,

- Փոքր եւ միջին ձեռնարկութիւններու աջակցութիւն,

- Սփիւռքահայ ներդրողներու ներգրաւում,

- Հայաստան-Լիբանան տնտեսական կապերու ընդլայնում,

- Հեռավար աշխատանքի եւ նոր արիւնտագիտութիւններու օգտագործում:

Համայնքի նպատակն այլեւս պէտք է ըլլայ միայն աղքատ ընտանիքներուն օժանդակելը: Պէտք է անցնիլ օգնութեան՝ տնտեսական կարողութեան ստեղծման:

Չորրորդ. երիտասարդութիւնը պէտք է դարձնել համայնքի օրակարգի կէտրոնը

Եթէ երիտասարդը իր ապագան չի տեսներ Լիբանանի մէջ, համայնքի երկարաժամկետ ապագան վտանգուած է:

Հետեւեալք երիտասարդին պէտք է տալ ոչ միայն մշակութային ծրագիր, այլ նաեւ՝ աշխատանքի, կրթութեան, առաջնորդութեան եւ որոշումներու մասնակցութեան հնարաւորութիւն:

Երիտասարդները պէտք է ներգրաւուին կուսակցութիւններու, եկեղեցական կառոյցներու, դպրոցներու, մշակութային միութիւններու եւ համայնքային որոշումներու մէջ:

Պէտք է նաեւ ընդունիլ իրականութիւնը. արտագաղթը ամբողջութեամբ կասեցնելը այսօր դժուար է: Բայց կարելի է ստեղծել այնպիսի պայմաններ, որ արտագաղթած լիբանանահայը չկորուի համայնքէն եւ շարունակէ ներդրում ունենալ անոր մէջ:

Հինգերորդ. դպրոցը պէտք է վերածել համայնքի ռազմավարական առաջնահերթութեան

Հայկական դպրոցը այլեւս միայն լեզու եւ պատմութիւն փոխանցող հաստատութիւն չէ: Ան համայնքի գոյատեւման հիմնական երաշխիքն է:

Պէտք է ներդրում կատարել հայերէնի ուսուցման արդիական մեթոտներու, թուային կրթութեան, արհեստագիտութեան, անգլերէնի եւ ֆրանսերէնի ուժեղ ուսուցման, ինչպէս նաեւ մասնագիտական կրթութեան մէջ:

Նպատակը պէտք է ըլլայ հայ երիտասարդ մը, որ միաժամանակ մրցունակ լիբանանցի եւ գիտակից հայ է:

Վեցերորդ. եկեղեցւոյ բեղուն դերակատարութիւնը դարձնել շեշտակի եւ աւելի տեսանելի

Եկեղեցին կրնայ դառնալ համայնքի հոգեւոր կեդրոնը, բայց նաեւ՝ ընկերային համախմբման եւ ճգնաժամային դիմակայութեան կարեւոր ուժ:

Անհրաժեշտ է աւելի սերտ համագործակցութիւն եկեղեցական, կրթական, բարեսիրական եւ երիտասարդական կառոյցներուն միջեւ: Եկեղեցին պէտք է աւելի շատ հասնի ընտանիքին, երիտասարդին եւ ընկերային դժուարութիւններ դիմագրաւող մարդուն:

Այսօր համայնքը կարիք ունի ներկայութեան, առաջնորդութեան եւ գործնական օժանդակութեան:

Եօթներորդ. սփիւռքը պէտք է ներգրաւել նոր ձեւով

Լիբանանահայութիւնը այլեւս չի կրնար իր ամբողջ ծանրութիւնը միայն տեղական միջոցներով կրել: Պէտք է կազմակերպուած ձեւով օգտագործել աշխարհի տարածքին ապրող լիբանանահայերու ներուժը:

Պէտք է ստեղծել լիբանանահայութեան համաշխարհային ցանց, որ կապէ Լիբանանի համայնքը Միացեալ Նահանգներուն, Զանաւայի, Եւրոպայի, Աւստրալիոյ, Հայաստանի եւ այլ երկրներու լիբանանահայերուն հետ:

ՎԱԶԳԵՆ ԳՎԱԼԱԳԵԱՆ

Շաբ.ը՝ Էջ 6

ՊՏՈՅՏ-ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺՄԱՐԱՆ

Հինգշաբթի, 3 սեպտեմբեր 2026-ին, Ազունիի Տիւնայ օժանդակ մարմինը (ԱՏՕՄ) կազմակերպեց պտոյտ մը դէպի Ազունիի Հայ ազգային բուժարան:

Պէյրութէն, Պոլսէն, Պոլսէն եւ Այնճարէն պտոյտին մասնակիցները առաջին հերթին ուղղուեցան բուժարանի մատուցող, ուր տեղի ունեցաւ նորակառոյց խորանի ծածկոցի օրհնութիւնը՝ ձեռամբ Մովսէս վրդ. Եսուկեանէն: Ան հակիրճ բացատրութիւններ տուաւ խորանը զարդարող իրերուն մասին, ինչպէս նաեւ անորադրած բուժարանին կարեւորութեան՝ կող ուղղելով ներկաներուն, որ այս հաստատութիւնը դառնայ բոլորին գուրգուրանքի առարկան, որովհետեւ կարենոր առաքելութիւն կը տեսնուի:

Ապա մասնակիցները հիւրընկալուեցան գեղատեսիլ բնութեան գիրկը գտնուող բուժարանի հիւրասրահին մէջ, ուր ԱՏՕՄ-ի անունով բարի գալուստի խօսք արտասանեց Յօղի Հաւաթեան, որ անդրադարձաւ մարմինի ծաւալած այլազան գործունէութեան: Ապա խնամակալութեան ներկայացուցիչ Սօսի Փոլատեան ծանօթացուց ինքնակալութեան ցարդ տարած աշխատանքները եւ խօսեցաւ ապագայի իրագործելի փոփոխութիւններուն մասին՝ բուժարանը աւելի ամուր եւ աւելի արդիական կառոյցի մը վերածելու նպատակով:

Գեղարուեստական բաժնով ներկաները ունկընդեցին հայկական ճոխ երաժշտութիւն՝ թմբուկի վրայ Սարք Զետիորճեանի եւ շուիով՝ Վիքի Հաւաթեանի կատարողութեամբ: Անկէ ետք մասնակիցները ունեցան իրենց ստորուան ճաշը՝ ճաշարան «Արեւ»-ին կողմէ պատրաստուած:

Մթնոլորտը ճոխացուց Վահէ Գամպուրեան՝ հայ եւ օտար այլազան երգերով: Այս հաճելի մթնոլորտն իսկանդավառուած եղան նուիրատուութիւններ, եւ տեղի



ունեցաւ վիճակագրութիւնը:

ԱՏՕՄ-ի այս նախաձեռնութիւնը դրական կերպով ընկալուեցաւ մասնակիցներուն կողմէ, որոնք ոչ միայն բարձր տրամադրութեամբ եւ լաւ տպաւորութեամբ բաժնուեցան Հայ ազգային բուժարանէն, այլ նաեւ՝ բաւարարուած ու գոհունակ սրտերով:

«ԷՄ. ԷՄ. ԷՅ.»

ՍԵՂԱ ՊԱՅՐԱՄԵԱՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ

Երկու շաբաթներու վրայ տեղի ունեցան խառն մարտարուեստի խաղերէն Թայլանտի Մուայ թայ մարզածեւի Լիբանանի ախոյեանութիւնը՝ Մարզական աւանի պատշէթալի դաշտին վրայ:

Հայկական «Ֆայթ լայֆ» ակումբէն Սեղա Պայրամեան 16 տարեկանէն վար մինչեւ 42 քկ կշիռի մրցումներու ախոյեան դարձաւ:

Սեղա Պայրամեան, որ 14 տարեկան է, աւարտականին պարտութեան մատնեց Թրիփոլիի ակումբներէն «Յիլալ Ճիմ»-ի մարզիկ Հոտա Խասուլը:

Առաջին ռաունտին առաւելութիւն ունենալէ ետք, Սեղա Պայրամեան կորսցուց 2-րդ ռաունտը, բայց երրորդ ռաունտին տիրապետեց իր մրցակի-



ցին վրայ, որ անօրէն ձեռով փորձած էր վիրաւորել Սեղան, որ յաղթական դարձաւ իրաւարարին որոշումով, որ պարտուած նկատեց Հոտան:

Յաջողութիւն կը մաղթենք Սեղա Պայրամեանին եւ իր ընտանիքին՝ մաղթելով նորանոր յաջողութիւններ:

ՓՈՐՁ-ՄՐՑՈՒՄԻ ՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐ - ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐ 1-2



Հայաստանի պատանիներու (17 տարեկանէն վար) հաւաքականը Երեւանի մէջ կատարած իր ուսումնամարզական հաւաքին ծիրին մէջ բարեկամական փորձ-մրցումի մը ընթացքին մրցեցաւ Լիբանանի պատանիներու հաւաքականին դէմ:

Մրցումը վերջ գտաւ Լիբանանի յաղթանակով՝ 2-1 արդիւնքով: Հայաստանի հաւաքականի միակ կողմը նշանակեց Ուրարտուի միջնապահ Սամուէլ Բեգլարեան: Լիբանանի կուլերը նշանակեցին Ժաւուատ Մըսլումանի եւ Ռամեզ Մըշաուրապ:

Լիբանանի պատանիներու ազգային խումբը կը պատրաստուի

Յորդանանի մէջ տեղի ունենալից Արեւմտեան Ասիոյ 13-րդ ախոյեանութեան մրցումներուն եւ աւելի ուշ Ասիոյ գտումի մրցումներուն:

Հայաստան իր կարգին կը պատրաստուի Եւրոպայի պատանիներու ախոյեանութեան գտումի մրցումներուն: Չտումի մրցումները տեղի պիտի ունենան Երեւանի մէջ, բայց Հայաստան ունի լուրջ մրցակիցներ, ինչպէս՝ Ֆրանսայի, Իտալիոյ եւ Լիքսամպուրկի պատանիները:

Հայաստան մրցում մը եւս պիտի ունենայ Լիբանանի դէմ վաղը՝ Երեւանի մէջ:

ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂՈՅ ԵՒ ԱՂԶԿԱՆՑ ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐԸ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ ՄԿԱՄՆ ՕԼԻՄՓԻԱՏԱՆ



Ուզպէքիստանի Սամարգանդ քաղաքին մէջ ընթացք առաւ ճատրակի համաշխարհային Օլիմպիատան, եւ առաջին հանգրուանին Հայաստանի տղոց հաւաքականը յաղթանակ արձանագրեց Պարպետոսի հաւաքականին դէմ: Հաւաքականի բոլոր անդամներն ալ յաղթանակներ տոնեցին: Ռուպերթ Յովհաննիսեան, Շանթ Մարգըլեան, Գաբրիէլ Սարգսեան եւ Մանուէլ Պետրոսեան հանգիստ յաղթանակներ արձանագրեցին:

Աղջկանց հաւաքականը, որ կը մըրցեր Հոնկ Զոնկի հաւաքականին դէմ, 3,5-0,5 արդիւնքով կրցաւ յաղթել:

Նշենք, որ տղոց հաւաքականը 10-րդ դասուած է, մինչ Պարպետոս 112-րդ դասուած խումբն է:

Աղջկանց հաւաքականը դասուած է 16-րդ, մինչ մրցակից Հոնկ Զոնկ 10-րդ դասուած խումբն է: 206 երկիրներ կը մասնակցին ճատրակի Օլիմպիատային:

«ԵՈՒՐՈՓԱ ԼԻԿ»

ԱՐԱՐԱՏ ԱՐՄԵՆԻԱ ՏՊԱՒՈՐԵՑ, ԲԱՅՑ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ

Դառնալէ ետք առաջին հայկական ակումբը, որ կը մասնակցի Եւրոպական երեք բաժակներու աւարտական մրցաշարին, Հայաստանի ախոյեան Արարատ Արմենիա իր առաջին մրցումը կատարեց Երեւանի մէջ եւ 4-1 արդիւնքով պարտութիւն կրեց Չեխիոյ Սփարթա Փրակայէն:

Արդիւնքը ծանր էր, բայց խաղի ընթացքը բաւական տպաւորիչ էր, եւ մրցումէն ետք նոյնիսկ Սփարթայի մարզիչը ընդունեց, թէ որքա՞ն դժուար էր Երեւանի մէջ խաղալը:

Կրկէս ըլլալ, որ խմբային լաւ մրցում չկրցաւ խաղալ Արարատ Արմենիան, բայց անհատական գետնի վրայ բաւական լաւ էր:

«Եւրոպա լիկ»-ի հետաքրքրական երեւոյթ մըն ալ պատահեցաւ, երբ Արարատ Արմենիայի մարզիկներէն Չիտան Պանճաքի (Կիլե-Պիսո) ելոյթ ունեցաւ Երեւանի մէջ, մինչ Չիտանի կրտսեր եղբայրը՝ Տանիէլ Պանճաքի, որ Պենֆիլդայի մարզիկ է, աւելի յաջող ելոյթ ունեցաւ Իտալիոյ Միլանո քաղաքին մէջ, Ա. ՍԵ. Միլանի դէմ մրցումին:



Պենֆիլդա կրցաւ 2-0 արդիւնքով յաղթական վերադառնալ Ա. ՍԵ. Միլանի դէմ մրցումին:

Հետաքրքրականը այն է, որ երկու եղբայրները վերջին շաբթուան ճակատումին իրար դէմ պիտի մրցին, երբ Միլան պիտի հիւրընկալէ Արարատը:

ՆՈԱ ԱԿՈՒՄԲԸ ՄԿԱՄԱԾ Է ԻՐ ԱՊԱԳԱՅ ՄԱՐԶԱԴԱՇԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Երեւանի Նոա ակումբը իր ապագայ մարզադաշտի կառուցման նախապատրաստական աշխատանքներուն սկսաւ: Ակումբի մամուլ ծառայութիւնը կը տեղեկացնէ, որ այս ուղղութեամբ առաջին մեծածաւալ քայլը արդէն իսկ առնուած է:

130 միլիոն դրամի ներդրման շնորհիւ, տարածքէն անցնող ելեկտրական գիծերը տեղափոխուած են գետնին տակ, եւ ատոր շնորհիւ այդ տարածքը շինարարական յաջորդ փուլերուն պատրաստ է:

Սօս 1,6 քիլոմէթր հատուածին մէջ իրականացած են անհրաժեշտ հողային աշխատանքները եւ տեղադրուած 13.040 մեթր ելեկտրական թելեր, որոնք կը փոխադրեն 35 քիլովոլթ լարման ելեկտրական գիծեր:



Ակումբէն նաեւ կը տեղեկացնեն, որ շուտով հանրութեան պիտի ներկայացուի Եւրոպական ամենէն բարձր չափանիշներուն համապատասխանող մարզադաշտի նախագիծը, որմէ ետք արդէն կը սկսին շինարարական բուն աշխատանքները:

«Դէպի հայկական մեծ երազ», կ'եզրափակէ ակումբին տարածած հաղորդագրութիւնը:

ՖՈՒԹՍԱԼ

ՄՈՒՏՈՎԱ - ՀԱՅԱՍՏԱՆ՝ 3-3

Հայաստանի ֆութսալի հաւաքականը Զիշինեի մէջ իր ուսումնամարզական հաւաքի ընթացքին փորձ-մրցում մը կատարեց Մուտովա-յի հետ:

Մրցումը վերջ գտաւ 3-3 արդիւնքով: Մուտովա արագ կ'ու նշանակեց երրորդ վայրկեանին եւ կրցաւ առաւելութիւն ունենալ մինչեւ կիսախաղը:

Սիւրիան Դերմենջեան նշանակեց հաւասարութեան կողմ: Այս կողմէն ետք մրցումը զգալիօրէն աւելի բացուեցաւ: Երկու խումբերը յաւելեալ յարձակումներով փոխանակ-




եցան, բայց ի վերջոյ չկրցան յաղթել մրցումին՝ աւարտելով գայն 3-3 արդիւնքով:

Այս հանդիպումը առանձնայատուկ էր նաեւ Հայաստանի հաւաքականի երկու նոր ֆութսոլիստներուն համար: Առաջին անգամ ըլլալով, ելոյթ ունեցան արժանթինահայեր Ֆաբրուսո Յովհաննիսեան եւ Մարթին Արամ Ռամիրո:

Այսօր նոյն խումբերը անգամ մը եւս պիտի մըրցին՝ Նկատի ունենալով, որ Հայաստանի հաւաքականը կը պատրաստուի 2028-ի աշխարհի ախոյեանութեան գտումի մրցումներուն:

«ՍԵՒ ՔԱՐՏ»-Ը՝ ՖՈՒԹՊՈԼԻ ՄԵՉ



Ռումանիոյ մէջ ֆութսոլի մրցումներու ընթացքին նոր պատժամիջոց սահմանուած է՝ «սեւ քարտ»-ը:

Այս նոր քարտը այժմ կը փորձուի 7-էն 16 տարեկաններու պատանիներու ախոյեանութիւններուն ընթացքին եւ տրամաբանական բացատրութիւն ունի:

Այս քարտը նախատեսուած է ոչ թէ դաշտը գտնուող ֆութսոլիստներուն, այլ՝ անոնց ծնողներուն համար:

Ռումանիոյ մէջ յաճախ տեղի կ'ունենան դէպքեր, որոնց ընթացքին իրենց երեխաներու ելոյթներուն հետեւող ծնողները դաշտին մօտ անկարգութիւն կ'ընեն, երբեմն նոյնիսկ փորձելով դաշտ խուժել եւ իրաւարարներուն ցոյց տալ, թէ «ինչպէ՞ս պէտք է դատեն»:

Ճիշդ այս դէպքերուն համար է, որ ստեղծուած է այս «սեւ քարտ»-ը: Իրաւարարները օրինաւոր քարտ մը ունեցան՝ զայն շատ ազդուած եւ յարձակողական ծնողներու դէմ օգտագործելու համար:

AFHIL
ARMENIAN MUTUAL FUND

YOGA

with
Maral Ohannesian
Starting September 24, 2026

Thursdays,
from 6:45 - 8:00 p.m

BOURJ HAMMOUD
ARIN CENTER 3rd FLOOR
01 255023
www.afhil.com

ԹՐԱՄՓ. «ԻՐԱՆԻ ՀԵՏ . . . »

Շարունակում Ա. Էջէն

ՄԱԿ-ի Իրանի հարցով փաստահալաբ առաքելութիւնը յայտարարած է, թէ բաւարար հիմքեր գտած է ենթադրելու, որ ամերիկեան ուժերը պատասխանատու են Միւսայ քաղաքի Շաճաբէ Թայեհաեհի Նախակրթարանին վրայ յարձակումին համար, ուր, ըստ իրանցի պաշտօնատարներու, արձանագրուած են 150 զոհեր, ներառեալ շուրջ 120 դպրոցականներ:

Առաքելութիւնը եզրակացուցած է, որ այս յարձակումը տարբերութիւն չէ դրած զինուորական եւ քաղաքային թիրախներու միջեւ եւ յանգեցուցած է քաղաքայիններու մահուան եւ քաղաքային ենթակառոցներու վնասման, ինչ որ միջազգային օրէնքի համաձայն կը նկատուի պատերազմական յանցագործութիւն:

ՄԱԿ-ի առաքելութեան հետաքննու-

թիւնը Նաեւ պարզած է, որ Իրանի իշխանութիւնները անցեալ տարուան դեկտեմբերին վերջին բողոքի ցոյցերուն ժամանակ լայնածաւալ եւ համակարգուած յարձակում կատարած են քաղաքայիններու վրայ, ինչ որ ներառած է անօրինական սպանութիւններ, խոշտանգումներ, կամայական կալանքներ, հարկադիր անհետացումներ եւ խօսքի ազատութեան խիստ սահմանափակումներ:

Առաքելութիւնը այդ արարքները նկատած է մարդկութեան դէմ յանցագործութիւններ:

Իրանի վերաբերեալ Անկախ միջազգային փաստահալաբ առաքելութեան նոր զեկուցումը պէտք է ներկայացուի ժընեւի մէջ ՄԱԿ-ի մարդու իրաւունքներու խորհուրդին:

ՌԻԱԶԻՆԿԹԸՆ ՕՄԱՆԻ ՄԵՋ . . .

Շարունակում Ա. Էջէն

Ժողովի ընթացքին, որուն մասնակցած են ամերիկեան դեսպալատունէն դիւանագետներ, սակայն ոչ դեսպալը, հուսիներու ներկայացուցիչները յստակացուցած են, որ մայիս 2025-ին Միացեալ Նահանգներուն հետ կնքուած զինադադարին շարունակութիւնը կ'ուզեն:

Անոնք շեշտած են, թէ իրենց յարձակումները միայն սեւտական Նաւերը կը թիրախաւորեն, եւ խոստացած են բոլոր մնացեալ Նաւերուն Պապ Մանտեպ Նեղուցին մէջ ազատ Նաւարկումը արտօնել:

Ամերիկացի պաշտօնատարներ բրիտանական «Տը Կարտիըն» օրաթերթին հաստատած են, թէ անցեալ շաբաթավերջին Օմանի մէջ ամերիկեան դեսպալատան մէջ գումարուած է հուսի դէպքերներու հետ ժողով մը, որուն հիմամբ Ուաշինկթըն Սեւտական Արաբիոյ Եմէ-

նի մէջ հուսիները ետ մղելու ջօզնելու որոշում մը տուած է:

Հուսիները ամերիկեան կողմին վստահեցուցած են, որ 2025-ին երկու կողմերուն միջեւ կնքուած զինադադարի համաձայնութիւնը տակաւին ուժի մէջ է, եւ իրենց Կարմիր ծովուն մէջ ամերիկեան Նաւերու վրայ յարձակելու մտաւորութիւն չունին:

Հուսիները շեշտած են, որ միայն Սեւտական Արաբիոյ առնչուած Նաւերը թիրախ կը նկատուին՝ նկատի ունենալով, որ Ռիատ Եմէնի դէմ շրջափակում հաստատած է:

Միւս կողմէ, սեւտական ղեկավարութեամբ Արաբական դաշինքի բանքեր Թուրքի Մալիքի յայտնեց, որ երեքշաբթի ժամը 18:50-ին սեւտական հակաօդային պաշտպանութեան ուժերը վնասագերծած են հուսիներու կողմէ արձակուած անօդաչու թռչող սարք մը՝ Նախքան Մեքքայի արգիլեալ օդային տարածք մուտք գործելը: Հուսիները լուրը «սուտ» որակեցին:

Իսլամական համագործակցութեան կազմակերպութեան քարտուղարութիւնը դատապարտեց Մեքքայի թիրախաւորումը եւ նշեց. «Սրբազան վայրերու ոտնահարումը անընդունելի խախտում է»:

Հուսիներու կողմէ Մեքքայի վրայ ենթադրեալ յարձակումը արժանացաւ արաբական եւ իսլամական դատապարտումի: Այդ առիթով արաբական ու իսլամական երկիրները զօրակցութիւն յայտնեցին Սեւտական Արաբիոյ:

ՓԱՐԻԶԻ ՄԵՋ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ . . .

Շարունակում Ա. Էջէն

«Մեր այսօրուան հանդիպումը Նախապատրաստական է, սակայն անկապ պէտք է յանգեցնէ 2026-ի տարիին արդիւնքներու: Աքապայի հոլովոյթը մեզի կարելի տրջանակ կը տրամադրէ գործընկերները միաւորելու, ջանքերը համակարգելու եւ կարիքներն ու առաջնահերթութիւնները միասնաբար որոշելու համար:

«Ես ձեզի յստակ հրաւեր կը յղեմ. որ Փարիզի հանդիպումէն դուրս գանք բանակին եւ ներքին անվտանգութեան ուժերուն աջակցելու միջազգային խորհրդրդաժողովի ճամբու քարտեսով եւ ատոր գումարման յստակ ժամանակացոյցով: Այս ճամբու քարտեսը պէտք է ստեղծէ մեր զինուորական ու ապահովական հաստատութիւններուն աջակցելու երկարաժամկետ մօտեցում: Լիբանան պատահական կամ ժամանակաւոր օգնութիւն կամ լուծումներ չի փնտռեր, այլ երկարաժամկետ գործընկերութիւն՝ յստակ իր պարտաւորութիւններով եւ շարունակականութեամբ, որ մեր զինուորական ու ապահովական հաստատութիւններուն կ'արտօնէ ծրագրել եւ զարգացնել իրենց կարողութիւնները, եւ ոչ թէ պարզապէս մէկ ճգնաժամէ միւսը կառավարել իրենց կարիքները», նշեց ան:

Ֆրանսայի Նախագահ Էմանուէլ Մաքրոն իր կարգին շեշտեց «լիբանանեան պետութեան իշխանութիւնը իր բոլոր հողերուն վրայ տարածելու կարելորութիւնը» նշելով, որ «այսօր Լիբանանի մէջ ապահովութիւնը վերականգնելու առիթ գոյութիւն ունի»:

«Անհրաժեշտ է, որ Իսրայէլ յարգէ շրջագծային համաձայնութիւնը», ըսաւ ան՝ աւելցնելով, որ Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփի եւ ամերիկեան ղեկավարութեան հետ հաղորդակցութիւններ տեղի պիտի ունենան «այդ հարցը իրագործելու եւ վստահ ըլլալու, թէ Իսրայէլ կը յարգէ իր ստորագրածը»:

«Անկախ Նախ եւ առաջ կը Նշանակէ իր բռնագրաւած հողերէն աստիճանական հեռացում, եւ լիբանանեան պետութիւնը ստանձնէ հարցերը, եւ երկրորդ ու միաժամանակ կերպով, գտնել լիբանանեան զինեալ ուժերուն ու լիբանանեան բանակին յարմար պայմաններ, որպէսզի ղեկավար դիրքի վրայ ըլլան, եւ անոնց օգնել իրագործելու համար այդ մէկը՝ մասնաւորաբար անոնց կարողութիւններուն աջակցելով», յայտնեց Մաքրոն:

Անդրադառնալով յետՖԻՆԻԼ-եան փուլին եւ մատնանշելով, որ Իտալիոյ վարչապետ Ճորճիա Մելոնիի հետ այս փուլին վրայ աշխատած է, Ֆրանսայի Նախագահը ըսաւ. «Հարաւային Լիբանանի մէջ միջազգային ուժերուն առաքելութեան աւարտը մեծ սխալ մըն է, եւ պէտք է մեր կողմէ յաջորդ օրուան պատրաստուիլնը»:

«Միջազգային ուժերը չեն կրնար լիբանանեան բանակին այլընտրանք ըլլալ, եւ հետագայ փուլին այդտեղ գտնուող ուժերը ներկայ պիտի ըլլան աջակցելու բանակին, որ իր աշխատանքը պիտի կատարէ եւ պարտաւորութիւնը իրագործէ», նշեց Մաքրոն:

Յորդանանի Ապտալա Բ. թագաւորը շեշտեց. «Լիբանանեան բանակը Լիբանանի անվտանգութեան եւ կայունութեան սիւնն է»:

«Ժողովականները պատասխանատուութիւն ունին կարելի եղածին չափ շուտ ամրապնդելու եւ հզօրացնելու լիբանանեան բանակը, որպէսզի կարենայ հարաւային Լիբանանի մէջ լիբանանեան բռնագրաւուած հողերուն վերահսկել», նշեց թագաւորը:

«Այս տարուան վերջաւորութեան այլ թուական մը պիտի ճշդուի իրագործուածը ներկայացնելու համար», ըսաւ Ապտալա Բ.:

Մաքրոն յայտարարեց. «Փարիզ այսօր կը հանդիսանայ մեր գործընկերներու հանդիպման վայր՝ Լիբանանի գերիշխանութեան ամրապնդման եւ զայն իր ապահովութիւնը ամբողջական կերպով երաշխաւորելու կարող դարձնելու համար»:

«Լիբանան, որ խաղաղութիւն կը վայելէ, ամբողջ Միջին Արեւելքի համար վերանորոգ յոյս կը ներկայացնէ, որովհետեւ գերիշխանութիւն ու կայունութիւն վայելող Լիբանանը ամբողջ շրջանին մէջ դէպի խաղաղութիւն ու կայունութիւն վճռական քայլ կը ներկայացնէ», ըսաւ ան:

«Լիբանանի Նախագահին եւ Յորդանանի թագաւորին հետ գործակցաբար եւ Միացեալ Նահանգներու, Սեւտական Արաբիոյ եւ մեր միջազգային գործընկերներուն հետ սերտ համակարգումով կ'աջակցին լիբանանեան զինեալ ուժերուն, որոնք Լիբանանի բոլոր հողերուն վրայ լիբանանեան պետութեան իշխանութեան տարածման համար անփոխարինելի է», նշեց Ֆրանսայի Նախագահը:

Նախագահ Աուն Փարիզէն մեկնելէ առաջ իր խոր գոհունակութիւնը յայտնեց Փարիզի ժողովի ընթացքին քննարկումներուն ընթացքէն՝ բարձր գնահատելով Ֆրանսայի Նախագահին եւ Յորդանանի թագաւորին այս ժողովը պատրաստելու ջանքերը եւ Լիբանանին աջակցիլ շարունակելու անոնց Նախանձախընդրութիւնը:

Ան Նաեւ շնորհակալութիւն յայտնեց ժողովին մասնակից պետութիւններուն ու միջազգային կազմակերպութիւններուն՝ այդ մէկը նկատելով յարգանք այդ կողմերուն մօտ Լիբանանի վայելած կարգավիճակին:

Նախագահ Աուն յոյս յայտնեց, որ ժողովի ընթացքին լիբանանեան պատուիրակութեան կողմէ ներկայացուած լիբանանեան բանակի եւ ներքին ապահովութեան ուժերուն կարիքները անհրաժեշտ դրական ընկալման արժանանան եղբայրական ու բարեկամ պետութիւններու եւ կողմերու կողմէ, ինչ որ կ'արտօնէ ամրապնդել զինուորական ու ապահովական հաստատութիւններու կարողութիւնները եւ զանոնք կարող դարձնել իրենց ազգային առաքելութիւնը կատարելու:

ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
106-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ
ՄԱՏԱՂԻ ԱՒԱՆԳԱԿԱՆ
ՊԱՏՐԱՏՈՒԹԻՒՆ

Հաճնոյ հերոսամարտի Նահատակներուն նուիրուած աւանդական մատարի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ շաբաթ, 10 հոկտեմբեր 2026-ին:

Հետեւաբար, կ'ոչ կ'ուղղենք բոլոր հայրենակիցներուն եւ բարեկամներուն, որ իրենց մատաղցու ոչխարը կամ նուիրատուութիւնները փոխանցեն Հաճնոյ հայրենակցական միութեան գրասենեակ, Ս. Գեորգ եկեղեցւոյ խորհրդրդատուն կամ շրջող հանգանակիչներուն:

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵՆԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԱՄՊԱՐ ԻՓԷԿԵՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՐԱԸ
ԿԵՆԵՐԱԿԱՅԱՆԸ

Դող՝ սիրտը գող

Մարիո Ֆօ

(կապակերպութիւն)

ԲԵՆԱԴՐԻՉ
ՅԱԿՈԲ ՏԵՐ ԴՈՒԿԱՍԵԱՆ

9-10-11 ՌԻԱԶՏԵՄԲԵՐ, 2026 | ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 8:00-ԻՆ
«ՅԱԿՈԲ ՏԵՐ ՄԵԼՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՐԱՐՈՂ

ENGLISH SUBTITLES

Տոմսերու համար հեռաձայնել 03-852712 թիւին, ինչպէս Նաեւ Ելոյթի օրերը կիշէն:

Կազմակերպութեամբ
«Յակոբ Տեր Մելոնեան»
Թատերասրահի Վարչութեան

ԵՐԵՒԱՆԵԱՆ ԵՐԵՎԱՆ
Երգահանընդ

Ելոյթ կ'ունենան՝ Նորայր Գազանճեան, Շաքէ Պաղտասարեան, Սոնա Մանճիկեան, Ղազար Զեօշկերեան եւ Սերժիօ Սիարոնեան, մասնակցութեամբ լիբանանահայ երաժիշտներու, ղեկավարութեամբ՝ Սեդօ Պաղտասարեանի:

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 21 Սեպտեմբեր 2026-ի Երեկոյեան ժամը 8:00-ին,
«Յ. Տեր Մելոնեան» թատերասրահին մէջ:

Տոմսերը ապահովել հեռաձայնելով 03 852712 թիւին եւ կամ Ելոյթին օրը՝ կիշէն:

Սակ՝ 10\$

40-ամեակին առիթով

ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹ

Մասնակցութեամբ Հայրենի երգիչներ՝

ԼԻԱՆԱ ԵՒ ԿԱՐԵՆ ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐՈՒ

Շաբաթ, 17 Հոկտեմբեր 2026, Երեկոյեան ժամը 9-էն սկսեալ,
Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ: